

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

12 դեկտեմբերի 2018թ.
ք.Երևան

N 167-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔՎԵԱՐԿՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ
ՕՐԿԱՆԻՑ ՀԵՏՈ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Ընտրական օրենսգիրք) 27-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետական կուսակցության լիազոր ներկայացուցիչ՝ Ռուբեն Թադևոսյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետական կուսակցության ՀՀ Կենտրոնական բանկում բացված նախընտրական հիմնադրամի միջոցներից վճարում կատարել քարոզչությունը սկսվելու օրվանից մինչև քվեարկության նախորդ օրը կատարված գործարքների համար՝ 194 700 (մեկ հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի չափով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

S. Մուկուչյան